Կազմված է 26.05.2023թ

Տպագրված է ընդամենը հինգ օրինակ
Օրինակ 4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԵՂԵԳ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2023թ. մայիսի 26-ի

հիմնադիր ժողովի որոշմամբ

Նախագահ՝

_____ Վ.Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ
«22» հունիսի 2023թ.

Գրանցման համար

211.171.1325557

Հարկ վճարողի հաշվառման
համար

02913808

65

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՂԵԳ»

ԲՆԱՊԱՀՊԱՆԱ - ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Եղեգնաձոր- 2023թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. **«ԵՂԵԳ»** բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող ֆիզիկական անձանց և /կամ/ իրավաբանական անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

1.2. Կազմակերպությունը գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.4. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5. Կազմակերպության անվանումն է՝

Հայերեն՝ **«ԵՂԵԳ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպություն**

Անգլերեն՝ **"EGHEG" Environmental-Social *Non-Governmental Organization*:**

1.6. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Մոմիկի փող., 2/2 շենք:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Կազմակերպության գործունեության նպատակն է՝ նպաստել անվտանգ էկոլոգիական ու բարեկեցիկ սոցիալական միջավայրի ձևավորմանը, մշակութային և ազգային արժեքների պահպանմանը և համայնքի կայուն զարգացմանը՝ բնության պահպանության, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման, բնությանը հասցված մնասի վերականգնման, բնակչության կայուն եկամտի բարձրացմանն աջակցության, համայնքի անդամների՝ համայնքային որոշումների ընդունմանը ներգրավման, նրանց իրավունքների պաշտպանության և հանրային իրազեկման բարձրացման միջոցով:

2.2. Կազմակերպության գործունեության առարկան է՝

2.2.1. Բնության պահպանության, էկոհամակարգերի վերականգնում, կենսաբազմազանության և աճելավայրերի պահպանություն, էկոլոգիական անվտանգություն, կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացում և հարմարեցում

2.2.2. Համայնքի կայուն զարգացում;

2.2.3. Զբոսաշրջության զարգացում, աջակցություն գյուղատնտեսությանը;

2.2.4. Բնապահպանական, առողջապահական, սոցիալական և անվտանգության վերաբերյալ տեղեկատվության իրազեկվածության բարձրացում;

2.2.5. Քաղաքացիական հասարակության կայացման նպաստում;

2.2.6. Համայնքի անդամների ներգրավում որոշումների ընդունման և իրականացման գործընթացին;

2.2.7. Կանանց իրավունքների պաշտպանություն և նրանց ներգրավում համայնքի զարգացման գործընթացին;

2.2.8. Երիտասարդների խնդիրների լուծում ու նրանց ներգրավում համայնքի զարգացման գործընթացին;

2.2.9. Հանրության կրթական մակարդակի բարձրացում, էկոկրթություն;

2.2.10. Սոցիալական խնդիրների լուծման և աղքատության նվազման աջակցություն;
2.2.11. Մշակութային արժեքների և ազգային արժեհամակարգի պահպանություն;
2.2.12. Համայնքի անդամների իրավունքների պաշտպանություն;
2.2.13. Հասարակական մոնիթորինգի իրականացում, կոռուպցիայի դեմ պայքար;
2.2.14. Սոցիալական ձեռներեցության իրականացում;
2.2.15 ՀՀ օրենսդրությամբ չարգելված ցանկացած գործունեության իրականացում:
2.3. Կազմակերպությունը՝ իր նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար համագործակցում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների, միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ:
2.4. Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ դրա մասնակից: Կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը չի բաշխվում անդամների միջև, այլ ամբողջությամբ ուղղվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակներին:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 16 տարին լրացած Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ (ինչպես նաև Կազմակերպության անդամ դառնալու իրավունք ունեցող իրավաբանական անձ), որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:
3.2. Կազմակերպության հիմնադիրները Կազմակերպության պետական գրանցումից հետո համարվում են Կազմակերպության անդամներ:
3.3. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին (իրավաբանական անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշման հիման վրա): Տասնվեցից մինչև տասնութ տարեկան անձը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Կազմակերպության անդամ կարող է դառնալ իր դիմումի հիման վրա՝ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:
3.4. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:
3.5. Անդամակցության դիմումը մերժելու դեպքում Նախագահի կողմից դիմումատուին ուղարկվում է գրավոր պատճառաբանված մերժում:
3.6. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպության անդամությունից՝ այդ մասին գրավոր դիմում (իրավաբանական

անձի դեպքում՝ իրավասու մարմնի որոշում) ներկայացնելով Նախագահին: Անդամությունը դադարում է Նախագահի որոշման հիման վրա:
3.7. Կազմակերպության այն անդամը, որը պարբերաբար խախտում է սույն Կանոնադրության դրույթները կամ չի կատարում Կազմակերպության ղեկավար մարմինների պարտադիր կատարման ենթակա որոշումները Նախագահի որոշմամբ հեռացվում է անդամությունից;
3.8. Կազմակերպության անդամների համար անդամավճար չի սահմանվում:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

1) ընտրել և ընտրվել Կազմակերպության կառավարման և վերահսկողությունն իրականացնող մարմիններում, բացառությամբ Կազմակերպության անչափահաս անդամների;

2) ներկա գտնվել Ժողովին անձամբ, իսկ իրավաբանական անձի դեպքում լիազորված անձի միջոցով;

3) ցանկացած դեպքում անվճար օգտվել Կազմակերպության ծառայություններից;

4) ծանոթանալու Կազմակերպության մարմինների որոշումներին, արձանագրություններին, ստանալու դրանց պատճենները;

5) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը: Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով: Դիմումը կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ Կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան սահմանված չէ;

6) Կազմակերպությունից պահանջելու Կազմակերպության գործունեության մասին տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալ նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին;

7) Ազատ դուրս գալ Կազմակերպության անդամությունից;

8) Մասնակցել Կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին;

9) Իրականացնել օրենքով սահմանված այլ իրավունքներ:

4.2. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) Կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները;

2) Բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները;

3) Հոգ տանել կազմակերպության հեղինակության մասին:

4.3. Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում, Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության, խիստ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1. Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ պետական գրանցման պահից:

5.2. Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվամբ՝ հայերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով:

5.3. Կազմակերպությունը, իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

5.3.1. Իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող;

5.3.2. Բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով;

5.3.3. Ստեղծել այլ կազմակերպություն կամ լինել նրա մասնակից;

5.3.4. Ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ;

5.3.5. Տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին;

5.3.6. Կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի հավաքներ;

5.3.7. Օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր անդամների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում;

5.3.8. Համագործակցել այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել կազմակերպություն կամ անդամակցել նրանց ստեղծած կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը:

5.3.9. Կազմակերպությունն իրավունք ունի սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինել իր գույքը և գործունեության

արդյունքներն, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծել առևտրային կազմակերպություն կամ դառնալ դրա մասնակից:

5.3.10. Կատարել օրենքով չարգելված այլ գործողություն:

5.4. Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան իր աշխատանքներում ներգրավել կամավորների: Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը: Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա Կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պարտավոր է

6.1.1. Վարել իր անդամների և կամավորների հաշվառում;

6.1.2. Պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը;

6.1.3. Կազմակերպության անդամի պահանջով նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերին, Ժողովի որոշումներին կամ տրամադրել դրանք դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը;

6.1.4. Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն;

6.1.5. Իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունը ներկայացնել Կազմակերպության ժողովի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվության հրապարակայնությունը;

6.1.6. Կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6.2. Կազմակերպության մարմինները՝ նրա անունից հանդես գալիս, պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7.1. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

7.2. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:
7.3. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝
1) Կազմակերպության անդամների ներդրումները;
2) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները;
3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները;
4) դրամական մուտքերը պետական բյուջեից;
5) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները;
6) հանգանակությունները;
7) օրենքով չարգելած այլ միջոցներ:
7.4. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը նրա անդամների միջև չի կարող բաշխվել:
7.5. Կազմակերպության հիմնադիրների և անդամների՝ սեփականության իրավունքով կազմակերպությանը հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Կազմակերպության սեփականությունն է:
7.6. Կազմակերպությունն իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացման համար ու այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով:
7.7. Կազմակերպության հիմնադիրները և անդամները կազմակերպությանը որպես սեփականություն հանձնած գույքի նկատմամբ իրավունքներ չունեն: Նրանք պատասխանատու չեն Կազմակերպության պարտավորությունների, իսկ Կազմակերպությունը՝ իր հիմնադիրների և անդամների պարտավորությունների համար:
7.8. Կազմակերպության գույքը չի կարող բաշխվել նրա հիմնադիրների և անդամների միջև:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Կազմակերպության կառավարման մարմիններն են Ժողովը և Նախագահը:
8.2. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:
8.3. Կազմակերպության հերթական Ժողովը գումարվում է յուրաքանչյուր տարի մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

8.11. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) տալիս է լիազորագրեր,

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում արտարժութային) և այլ հաշիվներ,

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարվա Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունը, որը տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

11) ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում անդամությունից,

12) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

8.12. Նախագահն՝ իր լիազորություններն իրականացնելիս, Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

8.13. Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների, կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

IX. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով:

9.2. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

9.3. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպությունը լուծարվելու դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

65